Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Մուրադյան

"__"_____ 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արմավիրի մարզ <<Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

ուսումնական հաստատության անվանումը

IXա

դասարանը

Փիրուզ Ղուկասյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ / դասարանի ընդհանուր բնութագիրը/

9ա դասարանը բաղկացած է 35 աշակերտից՝ 18 տղա, 17 աղջիկ: Չառաջադիմող աշակերտներ չկան:8-րդ դասարանը ամփոփվել է 7 գերազանց արդյունքով : Աշակերտները միմյանց նկատմամբ հանդուրժող են, փոխզիջող, հարգալից: Ընդհանուր առմամբ դասարանում տիրում է առողջ մթնոլորտ:

2. ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2023-2024 ուստարվա ընթացքում նախատեսվում են տարաբնույթ ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝ գեղագիտական, հայեցի, հոգևոր, ռազմահայրենասիրական, ֆիզիկական, աշխատանքային ու բնապահպանական դաստիարակության ուղղություններով:Այդ նպատակով կիրականացվեն զանազան այցելություններ տարբեր մշակութային օջախներ, հոգևոր կոթողներ, կկազմակերպվեն կինոդիտումներ, շաբաթօրյակներ, կլսվեն զեկույցներ ու ռեֆերատներ նշանավոր մարդկանց, ազգային ու ծիսական տոների, նահատակ հերոսների, բնապահպանական հարցերի ու այլ թեմաների շուրջ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն - Հոգևոր արժեքներ սերմանելու համար այցելել եկեղեցիներ, պատմամշակութային կոթողներ, ապահովել եկեղեցական տոների ճանաչելիությունը, կազմակերպել քննարկումներ աստվածաշնչյան առակների շուրջ, արմատավորել սերն ու հարգանքը քրիստոնեական արժեքների նկատմամբ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն - Գեղագիտական դաստիարակությունն ապահովելու համար այցելել թանգարաններ, պատկերասրահներ, դիտել կինոֆիլմեր և թատերական ներկայացումներ, դրանց հիման վրա իրականացնել քննարկումներ և կատարել եզրահանգումներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն - Հայրենասիրություն սերմանելու, ամրապնդելու և, ընդհանրապես, ռազմահայրենասիրական ոգին բարձր պահելու նպատակով անընդհատ խոսել բանակի, զինվորների սխրանքների, պատմական կարևորագույն իրադարձությունների, բոլոր

ժամանակների և հատկապես մերօրյա հայ ազատամարտիկների հերոսությունների մասին: Ամանորին, Բանակի օրվանն ընդառաջ կազմակերպել նամակագրություն զինծառայողներին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն - Համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ՝ կազմակերպելով սպորտլանդիաներ, ծանոթացնել անվանի մարզիկների հետ, իմանալ նրանց կերտած հաղթանակների մասին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն - Աշակերտների մոտ ձևավորել սեր աշխատանքի և աշխատավոր մարդու հանդեպ: Տանել հետևողական աշխատանք՝ դասասենյակը, շրջապատը մաքուր պահելու և կանաչ անկյունները խնամելու ու թարմացնելու հարցում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն - Իրականացնել էկոլոգիայի և բնապահպանության շուրջ զեկույցներ, ծանոթացնել <<Կարմիր գրքին>>, տարբերակել ֆլորայի և ֆաունայի առանձնահատկությունները:

4. ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ - Երեխաները պետք է հասկանան ,որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:Միևնույն ժամանակ գիտակցեն ,որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը ,որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ուսումն. շաբաթ	ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակություն	կատարման ժամկետ	կատարող
	Գիտելիքի օր	01.09. 23	դասղեկ
I	Կազմակերպչական հարցեր	07.09.23	դասղեկ
II	Զրույց << Անկախություն-30>>	14.09.23	դասղեկ
III	«Քանի լեզու գիտես ,այնքան մարդ ես» թեմայով զրույց : Ձևավորել բազմակարծություն և աշխարհայացք	28.09.23	դասղեկ
IV	Զրույց ≪ *Իմ սիրած զբաղմունքը* ≫	05.10.23	դասղեկ
V	Եթե ես լինեի …	12.10.23	դասղեկ
VI	Զրույց ≪ Ես էլ քեզ նման եմ ≫ թեմայով	19.10.23	դասղեկ
VII	Հայաստանի հուշարձաններ	02.11.23	դասղեկ
VIII	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում	09.11.23	դասղեկ
IX	Զրույց ≪ Պետական խորհրդանիշերը ≫ թեմայով	16.11.23	դասղեկ
X	Բնական աղետներ. երկրաշարժ	23.11.23	դասղեկ
XI	Հայկական ավանդույթներ	30.11.23	դասղեկ
XII	≪Ով եմ ես ≫ թեմայով զրույց	07.12.23	դասղեկ
XIII	«Պալիէթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը » թեմայով զրույց	14.12.23	դասղեկ
XIV	Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ	21.12.23	դասղեկ
XV	Նշանավոր մարդկանց կյանքից	11.01.24	դասղեկ
XVI	Ուժեղ լինել, նշանակում է…	18.01.24	դասղեկ
XVII	Եթե ես կարողանայի…	25.01.24	դասղեկ
XVIII	Մեդիագրագիտությունը ժամանակի պահանջ	01.02.24	դասղեկ
XIX	Ծիսական տոներ. Տյառնընդառաջ	08.02.24	դասղեկ
XX	Ժամկետանց սնունդ	15.02.24	դասղեկ
XXI	«Ապագայի ծառը» խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու , դասակարգելու հմտություններ	22.02.24	դասղեկ
XXII	Ինչպես կողմնորոշվել բարդ իրավիճակներում	29.02.24	դասղեկ
XXIII	<<Մեր տան աստվածն է մայրս>>	07.03.24	դասղեկ
XXIV	Իմ երազանքներն ու ցանկությունները	14.03.24	դասղեկ
XXV	Պատերազմ տեսած մանուկները	21.03.24	դասղեկ
XXVI	«Ասացվածքի ամբիոն» (աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասացվածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ , մարդկանց նկատմամբ հարգանք, մարդասիրություն	04.04.24	դասղեկ
XXVII	Ծիսական տոներ. Սուրբ Հարություն	11.04.24	դասղեկ
XXVIII	Զրույց ≪Պետք է արդյոք խնայել≫ թեմայով զրույց	18.04.24	դասղեկ
XXIX	Աշխարհն իմ պատուհանից	25.04.24	դասղեկ
XXX	Կարևո՞ր է արդյոք ունենալ սեփական կարծիք	02.05.24	դասղեկ
XXXI	Ինչպես ընտրել մասնագիտությունը	09.05.24	դասղեկ

XXXII	Իմ պարտականություններն ընտանիքում	16.05.24	դասղեկ
XXXIII	Տարեվերջյան ամփոփում	23.05.24	դասղեկ

Դասղեկի դաստիարակչական աշխատանքների թեմատիկա

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման / դասախոսություն,զրույց, դիտողական արշավ, էքսկուրսիա և այլն/ բովանդակությունը	ծանոթություն
14.09.2023	<<Եռագույն հպարտություն>>. դասախոսություն՝ նվիրված Անկախության 30-ամյակին	
30.11.2023	Ֆիլմի դիտում – հայ Մեծերի կյանքից	
18.01.2024	Ֆիլմի դիտում և հերոսների արարքների քննարկում	
15.02.2024	Քննարկում բնական աղետների, մասնավորապես երկրաշարժի շուրջ	
07.03.2024	Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ	
25.03.2024	Այցելություն Հայաստանի Պատմության թանգարան	
02.05.2024	Ուխտագնացություն Ծաղկեվանք	
16.05.2024	Այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր	